ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան **«05» հոկտեմբերի 2018թ.**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս Երևանի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Գ. Մովսիսյանի, որը գործում է ՓԲԸ կողմից 03.05.2018թ. տրված թիվ 01-38/51690 լիազորագրի հիման վրա՝ մի կողմից, և «ՀՀ Վարչապետի աշխատակազմ» ՊԿՀ՝ ի դեմս գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, մյուս կողմից, (այսուհետև համատեղ կոչվելով Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի երկրորդ մասը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են, որ իրենց միջև կնքված Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (Կազմակերպություն)) թիվ 015.09.18.0030/1 պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելը՝ 2018թ. սեպտեմբերի 1-ից իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2018 թվի հոկտեմբերի 05-ից: Այն համարվում է Կողմերի միջև կնքված Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (Կազմակերպություն)) վերոհիշյալ պայմանագրի անբաժանելի մասը:
3. Համաձայնագրով չլուծված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
4. Համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Չարենցի 141/3
Երևանի ԳԳՄ տնօրեն՝

----------Գ. Մովսիսյան

«ՀՀ Վարչապետի աշխատակազմ» ՊԿՀ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 26
Գործերի կառավարիչ՝

----------Վ. Պապիկյան